ՀԱԴՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՊԱՊՈՅԱՆ ԱՐՓԻ

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐԸ ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Այս հրապարակների հարթությունների վրա
Փռված են գծերը իմ մարմնի-
Դու այստեղ տեսնում ես,
Որ ես անցնում եմ իմ մարմնի գծերի միջով.
Բայց դու ինձ նորից փողոց ես ուղարկում
Ստուգելու համար մեծությունը խոսքի:

«Մեծությունը խոսքի»

Վաթսունականներին գրական ասպարեզ իջած Հ. Էդոյանն այն գրողներից է, ով խորն է զգացել անհատի դատապարտված լինելը բռնատիրական երկրում: 1977 թ. լույս տեսած, հետագայում՝ 2010թ. որոշ փոփոխություններով հեղինակի երկհատորյակում տեղ գտած «Անդրադարձումներ» ժողովածուի մեջ են հատկապես ամփոփված հեղինակի հոգու անդրադարձները իշխող իրականության նկատմամբ: Իր ժամանակի բարքերից օտարված է ժողովածուի քնարական հերոսը, ում համար շրջակա միջավայրը՝ քաղաքը, կարծես «փշոտ ոզնի» է դարձել, և «մեկ մոտեցող, մեկ հեռացող կյանքի պարիսպները» ապրել-մեռնելու հարափոփոխ զգացողություն են առաջացնում: Բանաստեղծին շրջապատող դատարկությունը լցված է ընդամենը իր «ափերից դուրս չելնող» օդով, և շնչահեղձության հասցնող դատարկությունը կարծես դիվային ուժ է ստանում և սկսում դիմադրել՝ հանուն հաստատված կարգի պահպանման: Իսկ կյանքն ընթանում է .

Ապրում եմ, ինչպես ջրերն են ապրում
Ավազների մեջ, կղզիների շուրջը, քարերի խորքում
Կամ ինչպես մի ծառ,
Որ ոչինչ չունի իրենից բացի
և արևի կիզիչ ճառագայթի տակ չի փնտրում ստվեր
կամ հավերժություն՝ մեկ օրվա համար:

«Խոստովանություն»

Հեղինակ-հերոսի տեղը կյանքի բոլոր իրերի ու երևույթների մեջ է, տարածության մեջ դրված ժամանակահատվածում է, ամենուր, ուր կարող է թաքնված ու պաշտպանված լինել: Հ. Էդոյանի պոեզիայի առանցքը կյանքը խորհրդանշող շարժումն է, որը ֆիզիկական երևույթից վերածվում է փիլիսոփայական կատեգորիայի, դառնում լինելիությունը հաստատող փաստ: Կյանքի ընկալումը պարադոքսալ բնույթ է կրում, ինչի միջոցով խոսքի պաթոսն ուժգնանում է. մոտենալու համար հեռանալ է պետք, ելնելու համար՝ իջնել, իսկ ստանալու համար՝ հրաժարվել: Համանման զգացողություններ են առաջանում, երբ պարզվում է, որ «ամեն ինչից հրաժարվողը» խոսքը հղում է իր շուրջն ու իր կողքն ապրողներին՝ հորդորելով նրանց իրեն նկատել մարդկանց մեջ, ծառերի մոտ, ջրերի վրա, հին սենյակի անցյալ ու ապառնի պատկերներում.

Եվ առավոտը կփորագրի
Իմ մարմնի վրա
Խոստումներ-գրված
Հիերոգլիֆներով
Մի նոր աշխարհի թագավորության:

«Խոստովանություն»

Սա շարժումն է անկախ ժամանակից, իրերի, կյանքի և անունների տեղափոխությունը: Ծրջադարձ է կատարվել իրերի, ժամանակի, տարածության մետաֆիզիկական կարգում, որի արդյունքում հայտնի մեծությունները վերածվել են հոգեկան վիճակների: Եթե սովորական տեսողության գործընթացի ժամանակ իրերը սկզբում շրջվում, հետո ուղիղ են երևում, բանաստեղծական գործընթացում ճիշտ հակառակն է: Հեղինակը շրջված իրերի ու երևույթների գունախաղերով արձագանքում ու անդրադարձնում է իր հոգու որոնածը: Սկսվում է հակադարձ շարժումը. մարմինը դեպի հետ է շարժվում, արևի ճառագայթները անդունդներից դուրս են գալիս, ճայերը վերադարձնում են կուլ տված ձկներին, և երբ բոլոր անշարժ ու շարժվող իրերի հայելային արտապատկերները լիովին անհետանում են, «այլ աշխարհներ տեսնելու» ցանկություն է առաջանում («Ցերեկային խոսքեր»):

Սովորական մահկանացուի համար անվերջության գաղափարը մինչև վերջ հասկանալի չէ, սակայն բանաստեղծական աշխարհընկալումը դուրս է բոլոր չափումներից, քանզի հոգին անմահ է: Միայն հոգին է, որ ընդունակ է կանգնել «անվերջ փոքրացող և ընդարձակվող գալակտիկաների» կենտրոնում, սենյակից պատշգամբ տանող ճանապարհին տեսնել այնտեղ կիտված «համաստեղություններ, աշխարհներ ու քաղաքներ և աստեղնային կարուսելի պատրանքով ապրել», զգալ անվերջության շրջապտույտը («Ցերեկային խոսքեր»):

Խոսքը, բառը ցանկացած գրական ստեղծագործություն կերտելու նյութն է, միջոցը: Խոսքի օգտագործման հմտությամբ է պայմանավորված բանաստեղծի վարպետությունը: Հ. Էդոյանի խոսքը պատկերավորման բոլոր միջոցներով և շարահյուսական կառույցներով հագեցած խոսք է, երբեմն նույնիսկ տարբեր հոգեվիճակներ վերարտադրող փոխաբերություններն ու խորհրդանիշները ոչ թե առարկաների փոխակերպումներն են, այլ նրանց միջոցով են արտաբերվում առարկաներն ու երևույթները.

Դու մի փնտրիր անունը առարկաների,
Նրանք քեզ կտանեն իրենց լռության մեջ.
և դու կլռես,
չես կարող խոսել,
և կդառնաս առարկա
մակերեսների խորքից նայող:

«Առարկաներ»

Հեղինակն իր հոգեվիճակը ներկայացնելու համար երկխոսության մեջ է մտնում մեկ քամու հետ, մեկ դիմում է անձրևին, փորձում է միաձուլել ապրելն ու կյանքից հեռանալը, ցանկանալու, բայց նաև չուզելու, չքնելու, բայց երազներ տեսնելու արվեստը սովորել, քանզի ով մեռնում է, իր ներկայությունն է ցույց տալիս, ապրողն իր բացակայությունն է հաստատում, խոսքի մեջ լռողը դատարկությունն է չափում: Երջակա միջավայրը մաքրող ու օդը թարմացնող անձրևը, որի համար «անստույգ իրականության» չափումներն անընդունելի են, նաև իրերի դրությունը փոխելու առաքելությունն է ստանձնել՝ շարժելով ծառերն ու փոշին, իր մեջ վերցնելով փողոցն ու շենքերը: Եվ երկրի ու երկնքի միջև կապ հաստատող անձրևից ոչ թե խուսափել, այլ մոտենալ և վերադարձի հայելու դեր կատարող կաթիլները՝ որպես «անդարձ կորած երազի նշույլներ», հավաքել է պետք («Անձրև», «Դիալոգ քամու հետ», «Քաղաքի արվարձաններում»):

Ժողովածուն սկսվում է «Մի կենսագրություն, որ կարող էր լինել նաև իմը» բանաստեղծությամբ, որում հեղինակը կիրառել է չափածո խոսքի այն տեսակը, երբ ասելիքի էական կողմերը բացահայտվում են առանց պատկերավորման միջոցներ գործածելու: Առաջին հայացքից ծամծմված մի պատմություն է (банальная история) ծղծիմ, միապաղաղ առօրյայի թակարդում հայտնված մարդու անփառունակ կյանքի մասին: Սակայն նրա երկար ու լուռ սպասումը՝ որպես բողոքի նշան, և թողած սիգարետի մոխիրը անելանելի հոգեվիճակի մասին են խոսում, որոնցից ազատվելու միակ միջոցը մահն է: Համանման հոգեվիճակներ պատկերող բանաստեղծություններում Մարդը կարծես ծուղակում հայտնված կենդանու նման ելք է փնտրում, հոգին հաճախ տագնապում

է, որի պատճառով երկվության զգացողություն է առաջանում. մեկ «ոտքերի տակ հետքեր չեն երևում», («Լուսամփոփի մեջ»), մեկ սենյակի իրերն են «հայացքները հառել հերոսի վրա», սակայն՝

Բայց ես առողջ եմ,
Չափազանց առողջ եմ,
Նրանց չեմ տեսնում:

«Սենյակում»

Շարունակվում է շարժումը, դանդաղ հոսում են հերոսի զգացմունքները, մտքերը, տեսիլքները, և մարդկային կամքը, բացելով արգելող պատուհանները, ներս է սահում և նվաճում «խարխլված ժամերի տարածությունները», սակայն, ըստ հեղինակի, չափի զգացողությունը պահպանել է պետք, քանի որ ասածի ու արածի ճշմարտությունը հաստատվում է միայն համարժեքության պարագայում, որովհետև և՛ ավելիի, և՛ պակասի դեպքում անհամամասնություն է առաջանում, որը կործանարար կարող է լինել («Ցերեկային խոսքեր»):

Ժողովածուի մեջ պատկերված են երաժշտության և առհասարակ հոգին մաքրող ու վեհացնող արվեստի մյուս տեսակների՝ որպես բիրտ իրականությունից կտրելու մոգական ուժի անդրադաձումները մարդու վրա: Պասակալյայի ընդամենը մի ակորդն ընդունակ է «մարդու մարմինը բարձրացնել» սովորական առօրյայից, հուշեր արթնացնել, երազանքի գիրկը գցել: Բախին նվիրված բանաստեղծությունը մի կատարյալ ներբող է. անմահ երաժշտությունը չունի սկիզբ ու վերջ, ամեն ինչ նրանում եզակի է, անգամ երկնքի ու երկրի միջև սահմաններն են վերացած, այնտեղ ապրում է հոգին, և «քայլերը վերադարձ չունեն»: Իսկ Միքելանջելոն կոչված է Արարիչ, որի հրաշքներով անվերջ հիանում ենք, իսկ նրա արարչագործ ձեռքն ընդունակ է «մարդկանց քարի մեջ դնելով հավերժացնել» («Պասակալյա», «Յոհ. Ս. Բախ», «Միքելանջելոյի ձեռքը»):

Մարդկանց հոգու վրա պակաս ազդեցություն չի ունենում նաև պոեզիան, այդ թվում նաև Հ. Էդոյանի պոեզիան, որը թարմություն բերեց հայ գրականության մեջ, որովհետև այն ոչ միայն սերված էր ազգային ավանդույթներից, այլ իր մեջ ներառում էր համաշխարհային մշակույթի արժեքները՝ Արևելքից մինչև Արևմուտք:

Ժողովածուի պսակն է «Սոնետների պսակը» բաժինը, որն ունի նաև «Անցյալի նոստալգիա» խոսուն ենթավերնագիրը: Անցյալի պատկերները տպված են բանաստեղծի հոգում, որոնց արձագանքն է հնչում օդի մեջ: Ներկա-անցյալ շրջողակում քաղաքը դեպի հետ է շրջվում, շենքերն այլ ձևերն են ստանում, կարծես իրերի անսահման հոսքը քարանում է,

պահը՝ անշարժանում, «հուշը փորձում է կորցնել ապագան»: Հեղինակն անցյալի մեջ, միֆական հերոս Դեդալուսի նման, իր կորցրած խենթ որդուն՝ Իկարուսին է փնտրում: Իսկ հետևում մնացած կյանքի տեսիլքները մղձավանջ են առաջացնում, սակայն անցյալի «անհասության զգացման» մեջ ապագայի լույսն է երևում: Բանաստեղծության հուզական բովանդակությունը հատկապես ուժեղանում է չափածո խոսքում քիչ հանդիպող կրկնության տեսակի՝ ակրոմոնոգրամայի կիրառման շնորհիվ, որը շղթայական շարք է ստեղծում՝ իրար կապելով բանաստեղծության բոլոր մասերը: Ծարժումը դեպի անցյալ շարունակվում է. «Մանկություն» բանաստեղծության մեջ ընդամենը մի քանի շտրիխով՝ «մաքուր, երկար մատներ, մազերի առատություն, խոստովանություն վերջալույսի մեջ», բառակապակցությունների միջոցով, արբունքի հասած պատանեկության գարնան զարթոնքից առաջացած «տանջանքն» է պատկերված, որն «անվերջ է, առանց սկիզբ»:

«Իմ անցյալը» բանաստեղծության մեջ հեղինակն առասպելական հերոսի նման անցյալի հին ափերն է փնտրում, որպեսզի մաքրվի բոլոր սին հույսերից և երկաթի նման ծանր հոգսերից: Սակայն որքան էլ հայացքն ուղղի դեպի անցյալ, միևնույնն է, ներկան է պահի տերը, որը և՛ ի վերուստ տրված շարժում է, և՛ դատավճիռ («Ես քեզ պիտի պահեմ»), և կոնկրետ պատկերի չունեցող, ինչպես կյանքի հետ հաշտեցման միակ խթան հանդիսացող սերն է փրկարար անձրևի նման տեղում երկնքից և ննջող հուշերն արթնացնելով՝ տանում մինչև վերջ («Սեր»):

Ժողովածուի մեջ ամփոփված տարվա եղանակների պատկերները, բնանկարային արժեքին զուգահեռ, կյանքի համապարփակ ընկալման միտում ունեն. «Ամռան երազներ»-ում ցանկապատի վրա թևերը կախ գցած թռչունները, աճած խոտն ու ծաղիկները մի կատարյալ հարմոնիա են ստեղծում, որի կատարելիությունը ամբողջանում է ամենօրյա «թագավորի» այցով, որը միշտ նույն ժամին է գալիս, և բնությունն իր սովորական առօրյային է անցնում.

Պատկերներն անկայուն են, նրանք անցնում են մեկը մյուսին,
Բայց ամեն մեկը գիտի իր տեղն ու դերը, և երբեք չի մոռանում,
Կամ իրեն չի շփոթում մյուսի հետ:

Ի հակադրություն բնության՝ մարդկային կյանքը հարմոնիկ չէ, այն ավելի շատ «խճճված ցանց» է հիշեցնում, որից դուրս պրծնելու միակ միջոցը բնությանը միաձուլվելն է, այդ իսկ պատճառով քնարական հերոսն իրեն գտնում է «երկնքի կաղապարների» մեջ, հետո «խառնվում է ծովին, ավազին ու խեցիներին», փորձում է այնտեղ գտնել «կյանքի գիրքը», և ամռան ունայնությունից նրա հոգին դեպի մեղմ աշուն է

ձգտում: Աշնան անկրկնելի բնապատկեր է «Աշնան երեկոն Երևանում» բանաստեղծությունը: Հատկապես աշնանն է, երբ քաղաքը, «ազատվելով ավելորդ գույներից», միայն իրեն հատուկ, բացառիկ գեղեցկություն է ստանում և ներկայանում իր ողջ հմայքով:

Ժողովածուի մեջ կյանքի և նրա անդրադարձումների զուգահեռ ընթացքն է պատկերված, քանի որ այս երկու երևույթները պայմանավորված են մեկը մյուսով, երբեմն նույնիսկ հայելային անդրադարձ է կատարվում.

Այստեղ տեսնում եմ քեզ, քանի որ իմ մեջ ես դու,
Քո քայլերն իմ մեջ են – քո մեջ են իմ քայլերը...
«Անդրադարձումներ»

Սակայն երկուսն էլ գտնվում են մի տիրույթում, որն իրենց չի պատկանում, այլ տրված է որպես օբյեկտիվ իրականություն՝ իր շարժման ու զարգացման օրինաչափություններով, և զգայուն անհատի հիմնական խնդիրը կյանքի անհամաչափ շարժման ռիթմում ինքն իրեն գտնելն ու հիշողության մեջ պահպանելու հրամայականն է դառնում.

Իմ անունն եմ հիշում,
որը հագել եմ չմրսելու համար::
«Ես հիշում եմ»

***

Հոդվածում փորձ է արված ներկայացնելու Հ. Էդոյանի «Անդրադարձումներ» ժողովածուի մի քանի ասպեկտները, իսկ հեղինակի բեղուն գրական ժառանգությունը թե՛ ծավալի և թե՛ գեղարվեստի առումով դեռևս կարիք ունի լուրջ ուսումնասիրության: